



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

76

2

L-85

my. 26

2010

ԼՍԱՐԱՆ


ԿՆՆՑԱԴՊԳՈՒՏ ԳԻՏԵԼԵԱՅ

Ա.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍՍՏՈՒՍՇԱՆՈՒՆԶ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ

ԳԱՍ ԵՐՐՈՐԴ



ԻԹԷՆԴՈՍԻԱ

Իսպարանի Խախպեան Ուսուցնարանի Հայոց

1861.

Պ Ա Տ Մ Ո Ի Թ Ի Ի Ն

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ

ԳՄՍ ԵՐՐՈՐԻ.

Այս երրորդ անգամն է որ կժողվուիք այս տեղ մեր դասախօսութիւնները լսելու, եւ ամենագովելի ուշադրութեամբ, ջերմեռանդութեամբ ու հանդարտութեամբ մըտիկ կընէք մեր ըսածներուն: Յայտնի ապացոյց (իսպաժ) է այս որ կախորժիք ու համ կառնէք մեր դասերէն, եւ կշահուիք ձեր լսածներէն: Աղէկ գիտցէք, պատուական ժողովականք, որ ասկէց մեծ վարձատրութիւն ու քաջալերութիւն չկրնար լինել մեզի համար ձեր կողմանէ այս աշխարհիս մէջ. իսկ անդին՝ տարակոյս չունիմք որ մեր վարձքը առատապէս պիտի առնուիք իՓրկչէն մերմէ որ ըսաւ. «Ով որ գաւաթ մը ջուր ալ միայն խմցընէ ծարաւ ունեցողին՝ ըսելով թէ սա ալ Քրիստոսի աշակերտն է, աղէկ գիտցէք որ իրեն վարձքը պիտի չկորսընցընէ: — Որ ոք արբուսցէ միում՝ իՓորքկանցս յայսցանէ բաժակ մի ջուր ցուրտ միայն՝ յանուն աշակերտի, ամէն ասեմ ձեզ, ոչ կորուսցէ զվարձս իւր»:

Առամ դրախտէն դուրս ելլէին ետքը երկու որդի ունեցաւ. մէկուն անունը Կային դրաւ, մէկաւինը Աբէլ: Կային անունը ստացուածք՝ այսինքն ունեցած բան կնշանակէ. Առամ այս անունը դնելով իր առջինեկ զաւակին՝ իրեն ուրախութիւնը յայտ-

նեց՝ նախ անոր համար որ օգնական մը ունեցաւ իրեն. երկրորդ՝ որ Կայենի ծնանելովը հաստատուեցաւ իր յոյսը թէ ուրեմըն եթէ ոչ այն զաւակը՝ նորա սերունդէն մէկը Փրկիչ պիտի լինի ազգի մարդկան, եւ սատանայէն իր խաբուելուն վրէժը պիտի առնու: Իսկ Աբէլ անունը կնշանակէ ցաւ կամ նեղութիւն. կերեւայ թէ Ադամ մարգարէական գուշակութեամբ հասկըցաւ Աբելի ծնած օրէն որ իրեն սաստիկ ցաւ ու տրտմութիւն պիտի բերէ այն զաւակին բռնական մահը, այսինքն Կայենին ձեռքէն սպանուիլը, որ այսպէս եղաւ:

Կային երկրագործութեան սէր ձգեց ու սկսաւ գետին բանիլ իր հօրը օրինակին հետեւելով եւ անոր օգնելով. Աբէլ հովիւ եղաւ ու ոչխար կարածեցընէր: Երկուքն ալ անտարակոյս իրենց ծնողացը վրայ տեսած էին այս բարի օրինակն որ իրենց աշխատանքին պտուղներէն, մանաւանդ անոնց երախայրիքը՝ այսինքն առջի պտուղները՝ Աստուծոյ կնուիրէին կընծայէին՝ իբրեւ երախտագիտութեան ու շնորհակալութեան նշան. ուստի Աբէլ իր ոչխարներուն կաթն ու կարագը, գուցէ նաեւ քանի մը գէր ու պարարտ ոչխարներ Աստուծոյ նուիրեց. Կային ալ իրեն բանեցուցած գետնին բերքերէն ըրաւ իր զոհը:

Աստուածաշունչը կըսէ թէ Աստուած Աբելի զոհին վրայ նայեցաւ, իսկ Կայենի զոհին վրայ չնայեցաւ. եւ պատճառը Պօղոս առաքեալը կըրօղցէ. «Աբելի մատուցած զոհը աւելի աղէկ էր կըսէ՝ քան թէ Կայենինը, եւ հաւատքով ու սրտանց էր»: Իսկ թէ Աստուած ի՞նչ կերպով ցուցուց իրեն Աբելի վրայ ունեցած հասնութիւնը ու Կայենի վրայ տհասնութիւնը՝ յայտնի չէ: Այս միայն յայտնի է որ Կային այս բանին վրայ սաստիկ տրտմեցաւ. ոչ թէ անոր համար որ ինչո՛ւ պաղ սրտով ըրաւ իր զոհն ու Աստուծոյ անհասնոյ եղաւ. — թէ որ այն լինէր տրտմութեանը պատճառը, անոր ճարը դիւրին էր. զղջումի գալ, թողութիւն խնդրել Աստուծմէ, եւ փութալ նորէն այնպէս մատուցանելու իր զոհն որ աստուածահասնոյ լինի Աբելինին պէս. — հապա անոր համար էր տրտմիւն որ ինչո՛ւ Աբէլ եւ անոր զոհը հասնոյ եւ ընդունելի եղան Աստուծոյ. որ է չար նախանձ եւ դառն ատելութիւն:

Հարցուց Աստուած Կայենի թէ ի՞նչ է տրտմութեանդ պատճառը . ինչո՞ւ համար երեսդ կախեցիր . մի՞թէ չե՞ս գիտեր որ աղէկութիւն ընես նե՛ վարձք է , գէշութիւն որ ընես՝ մեղք է . զուր տեղը մի՛ գանգըտիր . դու եղբօրմէդ մեծ ես , պէտք է այնպէս շարժիս որ մեծութիւնդ՝ աննախանձ ու խոհական վարմունքէդ երեսնայ : — Ընդէ՞ր տրտմեցար , եւ ընդէ՞ր խոնարհեցան անկան երեսք քո : ո՞չ ապաքէն եթէ ուղիղ ոչ բաժանես՝ մեղար . լուռ լեր , առ քեզ լիցի դարձ նորա » :

Կային խրատուելու տեղը աւելի դառնացաւ . վասն զի նախանձ ըսածդ այնպիսի չարութիւն մընէ որ մարդուս ասքը կկուրացնէ արդարութեան լուսոյն դէմ , եւ ականջը կկըլացընէ Յշմարտութեան ձայնին դէմ : Գարձաւ ըսաւ Կային իրեն եղբօրը . « Արի դաշտը երթամք » աշխատելու կամ քալելու գթօսանքի : Ելան գրնացին դաշտը՝ իրենց ծնողացը քովէն հեռու . Կային յանկարծ Աբելին վրայ ելաւ , զարկաւ սպաննեց անմեղը : Այսպէս ահա առաջին նահատակ առաքինութեան՝ եւ աստուածպաշտութեան եղաւ արդարն Աբէլ : Եւ յիրաւի նահատակ է այն մարդն որ իրեն պարտքը կատարելուն համար՝ ուրիշի նախանձն ու դժոխային ատելութիւնը իրեն դէմ կշարժէ : — Իսկ Ադամ ու Եւա իրենց սիրելի զաւակին մահն որ տեսան՝ աւելի ալ աղէկ հասկըցան թէ իրենց անհնազանդութեան պտուղները ո՛րքան դառն են ու ողբալի : Անկից իզատ՝ պէտք է ըսեմք որ Ադամայ ու Եւայի կսկիծը ուրիշ որդեկորոյս ծնողաց կսկիծէն շատ աւելի եղած է անշուշտ , վասն զի իրենց անհնազանդութիւնն եղած էր Աբելի մահուանը առաջին պատճառ :

Ելաւ արդարոյն հոգին , եւ ազատեցաւ նա աշխարհիս թըշուառութիւններէն , տեսնեմք թէ չարագործն ի՞նչ ըրաւ եւ ի՞նչ պէս ապրեցաւ այնուհետեւ :

Հարցուց Աստուած Կայենի թէ « Ո՛ւր է քու Աբէլ եղբայրդ » : Այս հարցմունքը ո՛ր գիտէ քանի՛ քանի՛ անգամ Կայենին խղճմտանքը ըրաւ իրեն՝ այն սպանութիւնը գործած ըրպէսն իվեր : Իսկ նա որ անդադար կաշխատէր մոռնալու իրեն չարագործութիւնը եւ չգիտնալու կզարնէր , որպէս զի խռովեալ սիրտը քիչ

մը հանգստութիւն գտնէ, Աստուծոյ ամենագիտին առջեւն ալ ուզեց չգիտցող ձեւանալ. «Ձգիտեմ, ըսաւ. մի՛ թէ ես եղբօրս պահապանն եմ» : Ունայն խօսք. դնեմք թէ դուն եղբօրդ պահապանը չես. հապա նորա կեանքին տէրն ե՞րբ եղար որ առիւր ձեռքէն. ի՞նչպէս համարձակեցար անոր ձեռք վերցընելու. «Ձի՞նչ գործեցեր զայդ» . — առ ի՞նչ բան էր որ ըրիր : եղբօրդ արիւնը քեզի դէմ կաղաղակէ, վրէժխնդրութիւն կուզէ : «Գոչումն արեան եղբօր քոյ բողոքէ առ իս յերկրէ» :

Ատենը չէ՞ր որ Կային մեղայ գոչէր ու Աստուծոյ ողորմութեանը ապաւինէր : Բայց ոչ. նա ալ Ադամայ որդին էր մեզի պէս, ինչպէս որ մեք ալ իրեն պէս : Լուռ կեցաւ, ձայն չհանեց, գղջուծի չեկաւ. Աստուած ալ իր արդար դատաստանովը տուաւ անոր պէտք եղած պատիժը : «Այդ գետինն որ բերանը բացաւ ու Աբելին քու ձեռքովը թափուած արիւնը ծծեց՝ անիծեալ լինի քեզի համար. այնպէս որ աշխատիս՝ բանիս այդ գետինն ու պտուղ չտայ քեզի, եւ դուն առ հողին վրայ երերեալ եւ տատանեալ լինիս, ամենեւին հանգստութիւն չգտնես» :

Յուսահատ Կայինը Աստուծոյ տուած պատժոյն սաստկութիւնը իսկոյն հասկըցաւ. «Այդ պատիժը աւելի մեծ է ըսաւ՝ քան թէ զիս այս աշխարհէս հանելը. լաւ է մեռնիմ՝ ելլեմ աշխարհէս քան թէ այսպէս երերեալ եւ տատանեալ կեանք անցընեմ. լաւ է որ դիմացս ելլողը զարնէ մեռցընէ զիս : — Ո՛չ, ըսաւ իրեն Աստուած. ոչ այդպէս. զքեզ սպաննողը եօթը մարդասպանութիւն ըրած համրուի. «Ամենայն որ սպանանէ զԿային՝ եօթն վրէժս լուծցէ» : Այս ըսաւ ու նշան մը դրաւ Կայենին վրայ որ տեսնողը մէկէն ճանչնայ ու չսպաննէ : Նշանին ի՞նչ եղածը գրուած չէ. բայց կկարծուի որ կամ երեսին վրայ այլանդակութիւն մըն էր, եւ կամ գլխոյն ու բոլոր մարմնոյն վրայ անդադար դող ու երերմունք :

Այս պատմութիւնը լսողը մի՛թէ պէ՞տք է զարմանայ երբ որ կտեսնէ թէ շատ չարագործ ու վնասակար մարդիկ կան որ երկար կապրին աշխարհիս երեսը. պէտք չէ՞ մտածէ թէ այնպիսիներուն կեանքը մահուընէ ալ դառն ու անտանելի է, վասն զի

խղճմտանքնին անդադար զարնելով՝ երերեալ եւ տատանեալ կրնէ զանոնք, թէպէտ եւ դրսէն հանգիստ ալ կերեւնան ու պարապ ալ չեն կենար, իրենց համար զանազան գործեր կտեսնեն: Ինչպէս որ ահա Կային քաղաք մը շինեց, ու անունը իր որդւոյն անունովը ենովք դրաւ:

Աստուածաշունչը հարկաւոր չէ տեսած մեզի պատմել թէ Կայենին վերջը ի՞նչպէս եղաւ: Բայց անոր մէկ պատմութենէն որ քիչ մը մտած է՝ շատ մեկնիչներ այս իմաստը կհանեն:

Կայենի թողին թողանը որդին Ղամէք՝ հետը երիտասարդ մը առած ու որսի (ավի) ելած կլինի. անտառին մէջ գազանի նման բան մը տեսնելով՝ երիտասարդը Ղամէքին կցուցընէ որ զարնէ. նա ալ նետը (օխը) կնետէ կզարնէ, տեսնէ որ գազան չէ, Կայինն է. սարսափ կիյնայ վրան, կկատղի երիտասարդին դէմ, ու կզարնէ զինքն ալ կմեռցընէ: — Ահա այս կըսեն Աստուածաշնչին պատմածը թէ մէկ օր մը ըսաւ Ղամէք իրեն երկու կանանցը, որ էին Ադդա ու Սելլա. «Բան մը պատմեմ՝ ձեզի որ սարսափիք. մարդ մը սպաննեցի որ մեծ վէրք՝ խոց է սրտիս, երիտասարդ մը մեռուցի որ մեծ պատիժ է գլխուս. վասն զի թէ որ Կայինը մեռցընողէն ետը անգամ վրէժ պիտի առնուի, պետք է որ Ղամէքէն ետեանասուն ետը անգամ վրէժխնդրութիւն լինի. «Այր սպանի իվէրս ինձ, եւ երիտասարդ իհարուածս ինձ. զի ետէ ետեմ անգամ վրէժք խնդրիցին իկայենէ, ապա եւ ի Ղամէքայ ետեանասնեկին ետեմ»:

Կայենի զաւակներուն ու թոռերուն մէջ ալ գուցէ գտնուեցան աղէկ մարդիկ, բայց Աստուածաշնչին խօսքերէն այնպէս կերեւնայ որ շատը չար ու չարագործ մարդիկ էին, թէպէտ եւ խելքի, ֆարտարութեան, արիեստներ՝ գործիքներ հնարելու կողմանէ անուանի. ինչպէս որ անոնցմէ Յովբա զանունով մէկը երգ կամ երաժշտութիւն ու քնար՝ այսինքն նուագարան հնարեց. Թորէլ անունով մէկը առաջինն եղաւ որ պղինձն ու երկաթը հալեցընելով կամ տաքցընելով՝ զանազան գործիքներ շինեց. Թորէլին քոյրն ալ նոյեմա՝ մանած մանելն ու կտաւ գործելը հնարեց, կըսեն: — Թէ՛ ասկից եւ թէ՛ աշխարհիս վրայ մինչեւ

հիմա տեսնուածէն կերելի որ Աստուած այսպիսի մարդկային նարտարութիւնները՝ միայն արդարներուն չէ պահած, այլ իբրեւ երկրորդական կատարելութիւններ, եւ ոչ թէ կարգէ դուրս շնորհքներ, բաժին ըրեր է զանոնք նաեւ չարաց եւ մեղաւորաց :

Աստուած տեսնելով որ Ադամայ ու եւայի սրտերուն մեծ ցաւ եղաւ Աբելի մահը, կամեցաւ մխիթարել զանոնք, ուստի անոր նման արդար որդի մըն ալ տուաւ իրենց՝ որ ըսուեցաւ Սէթ : Սորա որդին ենովս առաջինն եղած կերելնայ որ աստուածալաշտութեան կարգեր՝ հանդէսներ հաստատեց. եւ այս կհասկընան սուրբ Հարք Աստուածաշնչին ըսածէն թէ «նա յուսացաւ կոչել զանուն Տեառն Աստուծոյ» :

Ենովայ թողերուն թողերէն մէկը, ենովք, այնչափ հասոյ եղաւ Աստուծոյ որ ողջ ողջ երկինք վերացաւ. «եւ ոչ ուրեք գտանէր, զի փոխեաց զնա Աստուած» կըսէ սուրբ գիրքը : Թէպէտ ոմանք կարծեցին որ իբր թէ ենովք ուրիշ նահապետներէն առաջ վահագանելուն կամ անոնցմէ կա՛րճ կեանք ունենալուն համար այսպէս ըսած է Աստուածաշունչը, բայց սուրբ գրոց ուրիշ խօսքերէն եւ առ հասարակ եկեղեցւոյ վարդապետներուն ըսածէն կհասկըցուի որ ենովք ալ եղիա մարգարէին պէս ողջ ողջ երկինք ելաւ, ինչպէս որ ըսինք : — Գրսի պատմիչներէն ոմանք կըսեն թէ այս ենովք նահապետն եղեր է առաջին գիր հնարողը, եւ գիրք ալ շարադրեր է. բայց ստոյգը չգիտցուիր :

Ենովքայ որդին Մամուսադա՛ ասով անուանի է որ ուրիշ ամէն նահապետներէն ալ երկար կեանք ունեցողը նա է. վասն զի ինըհարիւր վաթսուներկնը տարի ապրեցաւ. թէպէտ վերջապէս ինքն ալ մեռաւ՝ ջրհեղեղէն վեց տարի առաջ :

Հիմա տեսնեմք թէ ջրհեղեղն ինչո՞ւ եղաւ ու ի՞նչ կերպով :

Սեթայ զաւակները իսկզբան այնչափ արդար ու անմեղ էին որ որդիք Աստուծոյ՝ այսինքն Աստուծոյ օրհնած մարդիկը ըսուեցան. անոնց հակառակ՝ Կայենի սերունդը որդիք մարդկան կըսուէին՝ իբրեւ Աստուծմէ հեռու քալող ու միայն մարդկային ու աշխարհային զբաղմանց ետեւէ եղող մարդիկ : Բայց ասոնց Սեթայ որդիքներուն հետ ըրած խնամութիւններուն, բա-

րեկամուկներուն պատճառաւ՝ անոնք ալ այնչափ աւրուեցան, այնչափ իրենց արդարութիւնը կորուսին, անիրաւութեան, խարդախութեան, ամբարշտութեան ետեւէ եղան որ Աստուծոյ բարկութիւնը շարժեցին բոլոր աշխարհիս վրայ: «Որովհետեւ մարդիկ իրենց հոգին բոլորովին մոռցան ու մարմին դարձան, իմ հոգիս՝ իմ խնամքս ու շնորհքս ալ վերանայ այսուհետեւ ատոնցմէ, եւ իրենք որ միայն իրենց մարմինը հոգալու պարտելու փափկացընելու հետ են՝ այս պատիժն առնուն որ կեանքերնին ասկից ետքը հարիւր քսան տարիէն աւելի չլինի: — «Մի՛ մնացէ ոգի իմ իմարդկանդ յայդմիկ յաւիտեան, վասն լինելոյ դոցա մարմին, եւ եղիցին աւուրք դոցա ամբ հարիւր եւ քսան»:

Կըսէ Աստուածաշունչը թէ տեսաւ Աստուած որ ամէն մարդ ալ գիշեր ցորեկ չարութեան ետեւէ է, զղջացաւ (փիւշման եղաւ) մարդը ստեղծելուն: Ըսել կուզէ որ եթէ մարդու պէս մտածէր՝ պէտք էր որ Աստուած զղջում (փիւշմանութիւն) ցուցընէր մարդը ստեղծելուն վրայ: Կամեցաւ որ ջնջէ վերցընէ աշխարհիս երեսէն ոչ միայն մարդկային ազգը, այլ եւ բոլոր անասուններն ու թռչունները՝ որ մարդուս համար ստեղծեր էր:

Քայց մէկ մարդ մը միայն կար Սեթայ ցեղէն որ արդար էր Աստուծոյ առջեւը՝ իրեն ընտանեօքը հանդերձ, եւ էր նոյնափապետը. երեք որդիք ալ ունէր՝ որոց անուններն ասոնք էին. Սեմ, Քամ եւ Յաբեթ: Ասոնք միայն՝ իրենց ճնողացն ու ամուսիներուն հետ մէկտեղ՝ Աստուծոյ ողորմութեանը արժանի եղան, եւ ազատ պիտի մնային ուրիշ բոլոր մարդկանց եւ անասնոց կոտորածէն:

Յայտնեց Աստուած նոյնափապետին իրեն կամքը, ու ապրսպրեց որ մէկ տապան մը շինէ փայտէ, ներսէն ու դրսէն նաւթով կամ ձիւթով ծեփած, մէջը երեք կարգ ու խորշ խորշ բաժնուած. երկայնութիւնը 300 կանգուն, լայնութիւնը 50, բարձրութիւնը 30:

Տարիէն աւելի քէց այն տապանին շէնքը, եւ նոյնափապետը խօսքով ու գործով կբարոզէր ժողովրդոց որ դարձի գան

ապաշխարեն, որպէս զի ողորմի իրենց Աստուած, եւ սպանուցած պատիժը ետ դարձնէ. բայց մտիկ ընող չեղաւ խօսքին. Թերեւս շատը ծաղր ալ կընէին զինքը:

Հրամայեց Աստուած Նոյի որ ամէն կենդանիներէն ու Թըռչուններէն զոյգ զոյգ (չիֆթ չիֆթ) առնու տապանը արու եւ էգ, նմանապէս իրենց ու անոնց համար մէկ տարուան պաշար: Այն կենդանիներն ու Թըռչուններն որ աւելի հարկաւոր էին մարդուս, եւ սովորութիւն եղած էր անոնցմէ ողջակէզ ընելու Աստուծոյ, եւ սուրբ կենդանիք կըսուէին, անոնցմէ եօթ եօթը զոյգ կամ եօթնական հատ առ, ըսաւ. իսկ ան սուրբ ըսուած կենդանիներէն երկերկու զոյգ կամ երկերկու հատ:

Նոյի վեցհարիւր տարեկան եղած ատենը, այսինքն աշխարհիս ստեղծմանէն 2262 տարի ետքը, մտաւ Նոյ եւ իրեն հետ եօթը հոգի, նմանապէս ընտրուած ու Աստուծոյ հրամանաւր ժողովուած կենդանիներն ու Թըռչունները: Վրան եօթն օր ալ անցաւ, սոսկալի ջրհեղեղը կոխեց: Մէկ սաստիկ անձրեւ մը սկսաւ գալ որ քառասուն օր ու քառասուն գիշեր քշեց. օդուն մէջ եղած ջրային մասունքը խտացան՝ վար իջան, երկրիս մէջ գտնուած բոլոր ջրերը դուրս ցատքեցին. ծովերը ուռեցան բարձրացան, գետերը զայրացան, ճամբաներնին փոխեցին՝ չորս կողմերը կոխեցին. իհարկէ մարդիկ եւ անասունք սարսափած՝ յուսահատած՝ իրենց տներուն երդիքներն ելան. հոն ալ հասաւ ջուրը, յափշտակեց զիրենք ու խղրեց. լեռներու աշտարակներու ծայրերը վազեցին, հոն ալ ետեւներէն հասաւ փրփրալով՝ կուլ տուաւ զամէնքը. քարանձաւներու (մաղարաներու) մէջ մտան, հոն ալ հասաւ խղրեց: Բոլոր այս մեր երկրագունտը ջրով ծածկուեցաւ, այնպէս որ 150 օրուան մէջ մինչեւ խիստ բարձր լեռներէն վեր ալ 15 կանգուն բարձրացաւ ջուրը, եւ աշխարհիս երեսը ողջ կենդանի մը չմնաց՝ տապանին մէջը եղողներէն դուրս:

Անկից ետքը Աստուած քամի մը հանեց, ջրերը սկսան ցածնալ ու քաշուիլ, եւ տապանը Հայաստանի Այրարատ նահանգին մէջ եղած Մասիս լեռանը վրայ նստաւ: Քառասուն օր ետքը բացաւ Նոյ նահապետը տապանին պատուհանն ու ազ-

ուաւը (խառղան) արծրկեց որ իմանայ թէ ջրերը բաւական քա-
շուէ՞ր են թէ ոչ. բայց ազուաւը մէյմ'ալ չըարծաւ. յայտնի է որ
ջրին երեսը լողացող ծառերու եւ կենդանեաց մեռելներուն վը-
րայ թռչըտելով մնաց: Անոր ետեւէն աղաւնին ղրկեց. նա իրեն
մաքրասէր ոտքերը ղնելու տեղ չգտնելով՝ դարձաւ տապանն
եկաւ: Եօթն օր ալ սպասեց նոյ ու նորէն արձըկեց աղաւնին,
նա ալ իրիկուան դէմ՝ բերանը ձիթենիի ճիւղ մը բռնած՝ դար-
ձաւ եկաւ տապանը: Երբոր Եօթն օրէն դարձեալ արձըկեց, ա-
ղաւնին գնաց ու մէյմ'ալ չըարծաւ:

Այն ատեն նոյ Աստուծոյ հրամանաւը ելաւ տապանէն, հետն
ալ ընտանիքը եւ բոլոր կենդանիները: Իսկոյն սեղան մը շինեց,
եւ անոր վրայ սուրբ ըսուած կենդանիներէն ու թռչուննե-
րէն ողջակէզ ըրաւ, այսինքն մորթեց զանոնք ու սեղանին վը-
րայ դրաւ էրեց, իբրեւ զոյ (խուրպան), եւ իրեն շնորհակա-
լութեանը նշան:

Աստուած նոյի ողջակէզը սիրով ընդունեցաւ, կըսէ՝ սուրբ
գիրքը, եւ միտքը դրաւ որ մէյմ'ալ բոլոր աշխարհքս այն կեր-
պով տակն ու վրայ չընէ. պատճառն ալ վրայ կբերէ թէ
«Մարդկանց մտքին նայինք նէ՛ այն իքնէ կամ թէ ճննդենէն ի
վեր չարութեան ետեւէ է: — Ոչ եւս յաւելից անիծանել զերկիր
վասն գործոց մարդկան. զի միտք մարդկան հաստատեալ են
իխնամս չարին իմանկութենէ իւրմէ»: Ըսել կուզեր թէ քանի
որ մարդ իրեն անհնազանդութեամբը դրախտէն դուրս ընկաւ,
բնութիւնը ապականեցաւ, աւրուեցաւ, — անդառար խելքը չա-
րութիւն է, եւ առաքինութիւնը՝ այսինքն աղէկութիւնը գրեթէ
բնական չէ իրեն. չա՛րժեր որ իրեն համար բոլոր աշխարհս
մէջի կենդանիներովը նորէն նորէն աւրեմ կործանեմ: — Ցայտ-
նի բան է որ նաեւ այս խորհրդածութիւնը մարդկօրէն՝ ըրած
է սուրբ գիրքը՝ մեզի խրատ հանելու համար, որպէս զի գիտ-
նամք որ եթէ հիմա ընդհանուր ջրհեղեղ չպատահիր, անոր
համար չէ որ իբր թէ հիմակուան մարդիկը այն ատենիններէն
անմեղ են. հապա իրեն անհուն ողորմութիւնն է որ կներէ մարդ-
կանց չարութեանը:

Յեառոյ օրհնեց Աստուած նոյ նահապետն ու անոր երեք որդիքը որ ասին շատնան, եւ տիրեն աշխարհիս . խոստացաւ ալ անոնց որ այսուհետեւ մէյմ'ալ համաշխարհական ջրհեղեղ չընէ, այսինքն բոլոր աշխարհս ջրով տակն ու վրայ չընէ . եւ այս խոստմունքիս նշան լինի ձեզի, ըսաւ, ամպերուն վրայ երեւցած ծիրանի գօտին . քանի որ այն գեղեցիկ գոյնզգոյն կամարը տեսնէք երկնքին երեսը, մտքերդ բերէք այս իմ խոստմունքս : Այս ալ ապսպրեց անոնց որ միս կարենան ուտել, բայց չլինի թէ անով ասքերնին անգթութեան ու մարդու արիւն ալ թափելու վարժի . երբոր մէկը մարդ մը մեռցընէ, մեռնողին արիւնը մեռցընողէն պիտի ուզեմ, ըսաւ :

Ջրհեղեղին պատմութեանը վրայ քանի մը գիտնալու բաներ ալ կան որ թէպէտ Աստուածաշունչը յայտնի չըսեր, բայց վրանին շատ անգամ խօսք եղած է ու կլինի՝ թէ՛ իմաստնոց եւ թէ՛ ռամկաց մէջ :

Նախ այս գիտնալու է որ ջրհեղեղին պատմութիւնը աշխարհիս ամէն կողմը՝ ամէն ժողովրդոց մէջ մնացած է աւանդութեամբ, այսինքն որդւոց որդի բերնով ու գրով կպատմուի, թէպէտ եւ մէկ քանի պարագաները՝ դիպուածները մէկմէկէ տարբեր կերպով ըսուած են . եւ ոչ միայն Ասիոյ ու Ափրիկէի կռապաշտ ժողովուրդները իրենց հին գրքերուն մէջ ունին ջրհեղեղին պատմութիւնը, հապա մինչեւ Ամերիկացիներն ալ : Ասոնք միայն նոյ նահապետին ուրիշ անուն կուտան, ինչպէս որ հին ատենի Յոյներն ալ տարբեր անուններ տուեր են նոյի . զոր օրինակ Գեւկալիոն, Քսիսուծրոս, Կոոնոս, եւ այլն . ձիթենիի ձիւղ բերող թռչունին ալ աղանի չեն ըսեր, հապա քոլիպրի, որ Ամերիկայի գեղեցիկ թռչուններէն մէկն է՝ խիստ մանր . ուրիշ գլխաւոր պարագաները ամէնն ալ զարմանալի կերպով կը նմանին Աստուածաշնչին պատմածներուն :

Երկրորդ գիտնալիքն այս է որ ջրհեղեղը աշխարհիս ամէն կողմն ալ եղած է, եւ ոչ թէ մէկ կողորին վրայ, ինչպէս որ օմանք ուզեցին հասկընալ . վասն զի այն 2200 տարուան մէջ որ աշխարհիս ստեղծմանէն մինչեւ ջրհեղեղը անցեր էին, մարդ-

կանց երկար ապրելուն նայելով՝ հարկ է ըսել թէ աշխարհիս
ամէն կողմն ալ ցրուած ու շաւոցած էին մարդիկ : Ասոր մէկ
մեծ ապացոյց (իսպաթ) ալ այս է որ աշխարհիս լեռներուն ա-
մենէն բարձրերուն վրան ալ կտեմնուին մինչեւ հիմա ծովային
ու ջրային կենդանիներու ոսկորներ, որը ոսկոր մնացած՝ որն
ալ քար դարձած . յայտնի նշան որ ճշմարիտ է Աստուածաշուն-
չին ըսածը թէ ջրհեղեղին ջրերը աշխարհիս խիստ բարձր լեռ-
ներէն ալ 13 կանգուն վեր բարձրացան : Նոյնպէս հաստատու-
թիւն է այս բանիս որ մինչեւ հիմա աշխարհիս ցուրտ կողմերը
կգտնուին այնպիսի կենդանեաց ոսկորներ որ հիմա միայն տաք
երկիրներ կրնան ապրիլ անոնց ողջերը . նմանապէս տաք եր-
կիրներու մէջ կգտնուին ցուրտ երկրի կենդանեաց ոսկորներ :

Երրորդ, տապանին երկայնութեանը, լայնութեանն ու բարձ-
րութեանը նայելով հաշիւ եղած է որ ոչ միայն նոյ եւ իր ըն-
տանիքը հանգիստ կերպով մէջը կմեկնէին, հապա նաեւ 4500
տեսակ կենդանիք՝ մանր ու խոշոր, եւ անոնց համար պէտք
եղած տարեկան պաշարը :

Չորրորդ, Աստուածաշունչը կըսէ թէ նոյայ լտապանը Հայ-
աստանի Արարատ նահանգին լեռներուն վրայ նստաւ : Ուրիշ
ազգերն ալ, գրեթէ ամէնքը, այսպէս հասկըցեր են ու կհասկը-
նան, եւ մեր Հայոց մէջ իսկզբանէ հետէ հաստատուն աւան-
դութիւն է այս բանը : Բուն լեռան անունը Մասիս կըսուի մեր
մէջ, ու ամառ ձմեռ գլուխը ձիւնով ծածկուած է : Թէ հին ա-
տենը եւ թէ մանաւանդ քսան տարիէ մը իվեր՝ շատ մարդիկ
ուզեր են Մասիսին մինչեւ վերի ծայրը ելլել, ոմանք ալ կհաս-
տատեն թէ իրենք ելեր են, բայց տապանին մնացորդը կամ
նշանը չեն տեսած : Եւ զարմանք չէ . վասն զի այն լեռան գլու-
խը հարիւրաւոր կանգուն բարձրութեամբ ձիւնով ու սառոյց-
ներով ծածկուած է . տապանն ալ թէ որ մնացեր է՝ հարկաւ
այն ձիւներուն տակն է, եւ ոչ թէ պատկերհաններուն ձեւացու-
ցածին նման՝ Մասիսու վերի ծայրը ահագին մեծութեամբը նստած :

Մեր ազգին մէջ եղած բարեպաշտական հաստատուն աւան-
դութիւնը յայտնի է շատին, թէ ի՛նչպէս սուրբն Յակոբ Մծբնայ

հայրապետը փափաք ունեցեր է նոյալ տապանը տեսնելու, եւ սկսեր է Մասիսէն վեր ելլել: Աստուած գիտնալով որ մինչեւ վերի ծայրն ելլելը բնական կերպով անկարելի, եւ մանաւանդ անօգուտ է նորա համար, հրեշտակի ձեռքով տապանին մէկ փոքրիկ կտորը պարգեւեց սրբոյն, եւ նա ուրախութեամբ առաւ իջաւ լեռնէն վար ու շատ հրաշագործութիւններ ըրաւ անով: Այն տապանին մասը մինչեւ ցայժմ պահուած է էջմիածնայ գանձարանը՝ գեղեցիկ արծրութեամբ մէջ, մէկ թիզ երկայնութեամբ, տասը բեռաչափ լայնութեամբ ու երկու բեռաչափ թանձրութեամբ, մուկ ղեղին փայլուն ու կարծր փայտ, մէջտեղը փոքրիկ խաչ մը ագուցած՝ արծրութեան սկզբօժ, քովերն ալ հասարակ ակեր կամ գոհարներ շարուած: Տապանակին՝ այսինքն արծրութեամբն զոռնակին վրայ ձեւացած է սուրբն Յակոբ, որ բազկատարած աղօթք կընէ, եւ հրեշտակը՝ որ տապանին կտորը բերեր իրեն կուտայ: Եւ իտպով ասորման զգոյմատ

Հինգերորդ, ծիրանի գօտին, որ գրոց լեզուովը ծիածան կըսուի, բնական երեւոյթ մըն է որ անձրեւի ատեն՝ երբոր արեւը անձրեւոտ ամպերուն վրայ կզարնէ, գեղեցիկ գոյներով կծեանայ ու կամարածեւ կերեւնայ մեր աչքին: Յայտնի բան է որ այս բնական երեւոյթը ջրհեղեղէն առաջ ալ կար. բայց

Աստուած կամեցաւ որ ջրհեղեղէն ետքը նշան լինի իրեն խոստմանը. որով իմացուց թէ այսուհետեւ բոլոր աշխարհս ջրով աւրելու կամք չունի: Եւ իտպով ասորման զգոյմատ



76

0023390

2013

